


ПРАВО

Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման պայմանը և իրավունքի կենսագործումը

Լեյոյան Հասմիկ Ա.

«Վիվա Արմենիա» ՓԲԸ Տեղանքի տեղակայման պայմանագրերի կառավարման ավագ մասնագետ ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի դասախոս (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0001-7849-9591>
hasmik.leyloyan@ysu.am

ՀՏԳ՝ 340:34.03; EDN: GYIZXY

DOI: 10.58587/18292437-2025.3-41

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Իրավունք, իրավական հնարավորություն, իրավական իրականություն, իրավունքի կենսագործում, իրավունքի էություն, օբյեկտիվ իրավունք, դրական (պոզիտիվ) իրավունք, իրավունքի փիլիսոփայություն

Условие превращения права из возможности в действительность и реализация права

Лейлоян Асмик А.

*Старший специалист по управлению контрактами и по размещению сайтов в ЗАО «Вива Армения»
Преподаватель кафедры теории и истории государства и права юридического факультета,
Ереванский государственный университет (Ереван, РА)*

Аннотация. Существующие правовые возможности превращаются в правовую действительность исключительно при наличии соответствующих условий. Следовательно, выявление этих условий имеет важное практическое значение, и в связи с этим автор считает необходимым выявить и подробно проанализировать эти условия.

Прежде всего, автор подчеркивает, что право как возможность превращаются в действительность посредством эффективной реализации. Затем, исходя из методологического подхода к правопониманию, автор рассматривает реализацию права в широком смысле, включая как сущность права или «объективное» право, так и отличающееся от него позитивное право, а также осуществление и материализацию субъективных прав и обязанностей в общественных отношениях. В процессе анализа также рассматриваются этапы юридического процесса реализации права, а также их различия в зависимости от правовых систем.

Согласно представленному в статье заключению, первым и главным условием превращения права из возможности в действительность является реализация сущности права в правовых явлениях, а категории «правовая действительность» и «правовая возможность» отражают диалектику развития сущности права. Вторым - производным условием является проблема эффективной реализации соответствующих правовых норм или законов (как формы выражения сущности права), которая заключается, но не решается полностью в ходе правотворчества, посредством своевременного выявления и правильного выбора реальных, формальных, общих (абстрактных), конкретных, фактических, необходимых и случайных видов правовых возможностей. Одновременно, помимо правотворческой деятельности, на формирование содержания правовых возможностей и их эффективную реализацию могут влиять ряд объективных закономерностей и субъективных факторов, которые не зависят от воли законодателя. И, наконец, важным условием превращения права из возможности в действительность является также воля субъекта права.

Ключевые слова и словосочетания: Право, правовая возможность, правовая действительность, реализация права, сущность права, объективное право, позитивное право, философия права

The Condition for Transforming Law from a Possibility into Reality and its Realization

Leyloyan Hasmik A.

*Site Implementation Contracts Management Senior Specialist at “Viva Armenia” CJSC Lecturer of the
YSU Chair of Theory and History of State and Law (Yerevan, RA)*

Abstract. Existing legal possibilities transforming into legal reality only in the presence of the corresponding conditions. Therefore, the identification of these conditions has significant practical importance, taking into account which the author considers it necessary to highlight and thoroughly analyze these conditions.

First and foremost, the author emphasizes that law, as a possibility, transforms into reality through its effective realization. Then, based on the methodological approach to legal understanding, the author considers the realization of law in the broad sense of law, including both the essence of law or “objective” law and positive law, as well as the realization and materialization of subjective rights and duties in social relations. During the analysis, the stages of the legal process of the realization of law are also discussed, as well as their differences depending on the legal systems.

According to the conclusion presented in the article, the first and primary condition for the transformation of law from a possibility into reality is the realization of the essence of law in legal phenomena, while the categories of “legal reality” and “legal possibility” characterize the dialectic of the development of the essence of law. The second - subsidiary condition is the problem of the effective realization of the relevant legal norms or laws (as a form of expression of the essence of law), which is addressed, but not fully resolved, during the law-making process, through the timely identification and correct selection of real, formal, general (abstract), specific, actual, necessary and random types of legal possibilities. At the same time, aside from law-making activities, the formation of the content of legal possibilities and their effective realization may be influenced by a number of objective regularities and subjective factors that are independent of the will of the lawmaker. And finally, an important condition for the transformation of law from a possibility into reality is also the will of the subject of law.

Keywords & phrases: Law, legal possibility, legal reality, realization of law, the essence of law, objective law, positive law, philosophy of law

Իրավական իրականության կամ կեցության մեջ գոյություն ունեցող իրավական հնարավորությունները վերածվում են իրավական իրականության միայն համապատասխան պայմանների առկայության պարագայում: Հետևաբար, այդ պայմանների բացահայտումը ունի կարևոր գործնական նշանակություն, ինչը հաշվի առնելով հարկ ենք համարում վեր հանել և մանրամասն վերլուծել այդ պայմանները:

Նախ և առաջ, վերը նշվածի համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ իրավունքը՝ որպես հնարավորություն վերածվում է իրականության կենսագործման միջոցով [2, էջ 46]: Այսինքն, հասարակական հարաբերություններում իրավունքի արդյունավետ կենսագործումը հանդես է գալիս, որպես իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կարևորագույն պայման:

«Իրավունքի կենսագործում» հասկացությունը տեսական իրավաբանական գրականության մեջ, ամենապարզ պատկերացմամբ, սահմանվում է՝ իրավական պատվիրանների – կարգադրագրերի կենսագործում մարդկանց վարքագծում: Սակայն, հաշվի առնելով իրավահասկացողության մեթոդաբանական մոտեցումը, որի դիրքերից մենք հանդես ենք գալիս՝ «իրավունքի կենսագործում» հասկացությունը կամ տեսական կառույցը ձեռք է բերում փիլիսոփայական իմաստավորում: Մասնավորապես, անհրաժեշտ է հստակ տարբերակել իրավունքի էության կամ «օբյեկտիվ» իրավունքի և դրանից տարբերվող դրական (պոզիտիվ) իրավունքի, ինչպես նաև սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների կենսագործումը կամ նյութականացումը հասարակական հարաբերություններում: Այս մոտեցման պարագայում «իրավունքի կենսագործում» հասկացությունը պետք է ընկալել և հասկանալ իրավունքի լայն իմաստով թվարկված տարրերից ամեն մեկի կենսագործման անհրաժեշտությունից ելնելով:

Վերոգրյալը հաշվի առնելով, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման առաջին և գլխավոր պայմանը իրավունքի էության կենսագործումն է իրավական երևույթ-

ներում: Իրավունքի էություն ասելով հասկանում ենք իրավունքի օբյեկտիվ բովանդակության մասին համընդհանուր և համամարդկային պատկերացումներն ու փիլիսոփայական ըմբռնումները, որոնք առկա են հասարակության մեջ կոնկրետ ժամանակաշրջանում: Այլ կերպ ասած՝ իրավունքի որպես էության բովանդակությունը կամ ընդհանրապես այդպիսի օբյեկտիվ բովանդակության մերժումը կախված է իրավահասկացողությունից: Իրավունքի մասին արդի հայեցակարգերի համաձայն՝ իրավունքի էության հիմքում ընկած են իրավունքի որպես ազատության չափի, արդարության և ձևական հավասարության գերակայության հիմնարար սկզբունքները [4, էջ 17], ինչպես նաև իրավունքի որպես օբյեկտիվ կեցության գերակայությունը դրական (պոզիտիվ) իրավունքի և օրենքների նկատմամբ: Այս ամենը հաշվի առնելով, «իրավական իրականություն» և «իրավական հնարավորություն» կատեգորիաները բնութագրում են իրավունքի էության զարգացման դիալեկտիկան: Այսպես, եթե իրավական իրականությունը իրավունքի էության կենսագործված՝ իրականություն վերածված ձևն է, ապա իրավական հնարավորությունը իրավունքի էությունն է «ինքն իր մեջ» [6, էջ 165]:

Իրավունքի էության՝ որպես իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման պայմանի, կենսագործման հիմնախնդիրը հանգում է, սակայն ամբողջովին չի լուծվում իրավաստեղծագործության միջոցով՝ այն է իրավունքի էության կամ օբյեկտիվ իրավունքի պահանջների ձևակերպման և ամրագրման հիմնախնդիրին: Մա նշանակում է, որ իրավաստեղծագործության միջոցով իրավունքի էության բովանդակությունը արտացոլվում է իրավական նորմերում և այդպիսով իրավունքի էությունը ստանում է պաշտոնական դրական իրավունքի ձև: Տեսական իրավաբանական գրականության մեջ ընդունված է նաև «իրավունքի կենսագործում» հասկացության տակ առաջին հերթին հասկանալ իրավաստեղծագործության միջոցով իրավական բնույթ ունեցող պաշտոնական ձևերի ընդունում, դրանցում իրավունքի էության, սկզբունքների, իդեալների,

պահանջների ամրագրում [2, էջ 47 կամ 5, էջ 170]: Սակայն, պաշտոնական իրավունքի ձևերի ընդունումը և դրանցում իրավունքի էության բովանդակության ամրագրումն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է իրավունքի էության կենսագործման համար: Այս եղանակով իրավունքի էությունը միայն ձեռք է բերում իրավաբանական ուժ, իսկ, իրավաբանական ուժը կամ իրավունքի գործողությունը՝ ի տարբերություն կենսագործված իրավունքի, դեռևս իրավական իրականություն չէ:

Մեր մոտեցմամբ, իրավունքի էության պահանջները կամ սկզբունքները կմնան իրավական հնարավորությունների կարգավիճակում և չեն կենսագործվի իրավական իրականության մեջ, քանի դեռ պաշտոնական իրավունքի ձևում սահմանված և համապարտադիրություն ձեռք բերած դրական (պոզիտիվ) իրավունքը իր ամբողջ ծավալով և կարգադրագրերով չի կենսագործվել մարդկանց վարքագծում և հասարակական հարաբերություններում: Հետևաբար, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման երկրորդ՝ ամանցյալ պայմանը համապատասխան իրավական նորմերի կամ օրենքների (որպես իրավունքի էության արտահայտության) արդյունավետ կենսագործման հիմնախնդիրն է:

Իրավունքի էության արտահայտությունը հանդիսացող օրենքների, այլ կերպ ասած՝ իրավական օրենքների, ամբողջ ծավալով և արդյունավետ կենսագործումը իրավական իրականության մեջ, նախ և առաջ, կախված է՝ իրական, ձևական, ընդհանուր (վերացական), մասնավոր, փաստացի, անհրաժեշտ և պատահական իրավական հնարավորությունների տեսակների բացահայտման և ընտրության հիմնախնդրից [1, էջեր 6-9]: Սա նշանակում է, որ իրավաստեղծագործության ընթացքում, բացի իրավունքի էության օբյեկտիվ պահանջները հաշվի առնելուց, մյուս գլխավոր նպատակը պետք է լինի ընտրել իրավական իրականության մեջ գոյություն ունեցող այն իրավական կարգավորման հնարավորությունները, որոնք ժամանակին, ավելի լրիվ և ճշգրիտ են արտացոլում ու համապատասխանում սոցիալական համակարգի զարգացման և գործառնության օբյեկտիվ պահանջներին, առանձնահատկություններին, միտումներին, ինչպես նաև տվյալ հասարակության բնույթին: Սակայն, այս ամենը, նույնպես, շատ դեպքերում բավարար չէ իրավական օրենքների արդյունավետ կենսագործման համար: Սա պայմանավորված է նրանով, որ, իրավական հնարավորության բովանդակության ձևավորման գործում մեծ դեր և ազդեցություն ունեն արտաքին գործոնները և որոշակի օբյեկտիվ օրինաչափությունները: Այդպիսիք են՝ պատահականության ազդեցությունը, տվյալ պատմական միջավայրում առկա հան-

գամանքները և քաղաքական պահանջմունքները, իրավունքի սուբյեկտների կամքը և իրավագիտակցության մակարդակը և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոններ: Հետևաբար, միայն իրավաստեղծ գործունեությունը չի կարող բացարձակ երաշխիք հանդիսանալ իրավական այս կամ այն հնարավորության և այն իրավական օրենքի ձևով արդյունավետ կենսագործման և իրականության վերածման համար: Այս գործընթացը պահանջում է բազմաթիվ բարդ և փոխապայմանավորված հանգամանքների միաժամանակյա համընկնում: Այնուամենայնիվ, իրավունքը հնարավորությունից իրականություն վերածվում է իրավական օրենքում իրավաստեղծագործության ձևով:

Վերոնշյալ եզրահանգումն իր հաստատումն է գտնում Ա. Գ. Վաղարշյանի մոտ, ով տվել է իրավունքի կենսագործման իրավաբանական գործընթացի փուլերի գաղափարը: «Առաջին փուլն իրավունքի, այսպես կոչված, պոզիտիվացման փուլն է, որտեղ իրավունքն իրացվում է իրավական օրենքում իրավաստեղծագործության ձևով: Երկրորդ՝ պոզիտիվ իրավունքի իրականացման փուլում ընթացք են ստանում օրենքի իրականացման տարբեր կառուցակարգերը, որոնց օգնությամբ տեղի է ունենում օրենքի պահանջների կոնկրետացում՝ սկսած ելթաօրենսդրական նորմատիվ ակտերի ընդունումից մինչև օրենքի նորմերի մեկնաբանում և այլն: Երրորդ փուլում, որն ավարտական փուլն է, տեղի է ունենում իրավունքի բուն իրականացումը: Հենց այս փուլում է, որ իրավունքը հնարավորությունից վերածվում է իրականության՝ կենսագործվում է» [4, էջեր 7-8]: Ինչպես տեսնում ենք նկարագրված երկրորդ փուլում իրավական օրենքների կենսագործումը տեղի է ունենում օրենքի պահանջների կոնկրետացման՝ ընդհուտ մինչև նորմերի մեկնաբանման միջոցով, ինչը, մեր համոզմամբ, չի դադարում լինել իրավաստեղծագործություն: Ավարտական երրորդ փուլն արձանագրում ենք այն ժամանակ, երբ իրավական օրենքը հասարակական հարաբերություններում և մարդկանց վարքագծում դառնում է իրականություն՝ իրեն բնորոշ ավանդական օգտագործման, կատարման, պահպանման և կիրառման ձևերով: Իսկ իրավաստեղծագործության արդյունավետությունը, իր հերթին պայմանավորում է իրավական օրենքի ամբողջ ծավալով կենսագործումը յուրաքանչյուր այս չորս իրավական ընթացակարգային ձևերով:

Հաշվի առնելով վերը նկարագրված իրավունքի կենսագործման իրավաբանական գործընթացը, պետք է նշենք նաև, որ վերջինիս փուլերը կախված իրավական համակարգերից տարբերվում են: Ռոմանոզերմանական իրավական համակարգի պարագայում, որի հատկանիշներով օժտված է նաև Հայաստանի Հանրա-

պետությունը, առաջին փուլը բնական կամ օբյեկտիվ իրավունքի բովանդակության ամրագրումն է դրական իրավունքի կամ օրենքի տեսքով: Ինչն իրականացվում է սահմանադրաիրավական եղանակով, ինչպես նաև ընթացիկ գործող օրենսդրության մեջ ամրագրման միջոցով [7, էջ 377]: Սահմանադրաիրավական եղանակն ենթադրում է իրավունքին սահմանադրական նորմատիվ իրավական ակտի ձև և ուժ տալը, որի արդյունքը Սահմանադրության՝ որպես հիմնական օրենքի ստեղծումն է: Սահմանադրությունը հանդես է գալիս իրավունքի էության (գաղափարի, սկզբունքի) արտահայտման առաջնակարգ ձև: Ինչ վերաբերվում է ոչ սահմանադրաիրավական օրինաստեղծագործությանը, ապա այն հաջորդում է Սահմանադրությանը և ընթացիկ օրենսդրության մեջ կոնկրետացնում է սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը և նպատակները: Այս ճանապարհով օրենքը ձեռք է բերում իրավունքի օբյեկտիվ բովանդակություն և դրանով իսկ դառնում է իրավական օրենք: Իրավունքի կենսագործման հաջորդ փուլում ընթացք են տրվում օրենքի կենսագործման տարբեր կառուցակարգերը, որոնց միջոցով տեղի է ունենում օրենքի իրավական պահանջների և դրույթների կոնկրետացում: Այդ կառուցակարգերի ձևերն են ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունը, օրենքների դրույթների մեկնաբանումը, և այլն [7, էջ 377]:

Անգլոսաքսոնական իրավական համակարգի պարագայում իրավունքի կենսագործման իրավաբանական գործընթացի փուլերը այլ են: Մասնավորապես, եթե ռոմանոգերմանական իրավական համակարգում բնական կամ օբյեկտիվ իրավունքի էության և բովանդակության ձևականացման գործընթացը կազմված է երեք փուլերից, այն է՝ սահմանադրումը, օրինաստեղծագործությունը և ենթաօրենսդրական իրավաստեղծագործությունը, ապա անգլոսաքսոնական իրավական համակարգում իրավունքի էության արտացոլման և ձևականացման (համապարտադիր նորմատիվ իրավական ակտերի վերածման) գործառույթն իրականացնում է դատարանը: Դատարանը կոնկրետ դատական գործ քննելիս, մանրամասն ուսումնասիրում է գործի փաստական հանգամանքները և պարզում է դրանց նմանությունը նախկինում համանման գործի փաստական հանգամանքների հետ: Այնուհետև, դատարանը, հաստատելով դրանց նմանությունը, քննվող գործը հարմարեցնում է նախկինում տեղի ունեցած կազուսին՝ նախադեպին և, օգտագործելով նախկինում համանման գործով կայացրած որոշման իրավաբանական եզրակացությունը և փաստարկումը, կայացնում է նոր որոշում՝ դրանով իսկ որոշելով կողմերի իրավունքները և պարտականությունները: Այս

ճանապարհով դատարանը իրավաստեղծ կամ դասական իմաստով նախադեպի միջոցով ամրագրում է իրավունքի իր կողմից հասկացված էությունը՝ դասական նախադեպային որոշման մեջ:

Ի տարբերություն ռոմանոգերմանական իրավական համակարգի, անգլոսաքսոնական իրավական համակարգում իրավունքի կենսագործման իրավաբանական գործընթացն ավելի պարզ է, քանի որ իրավունքի էության կենսագործման համար իրավունքի բովանդակությունը նախնական օրենսդրական ամրագրում չի պահանջում և իրավաստեղծ նախադեպն ինքնին հանդիսանում է իրավունքի աղբյուր: Ինչպես նաև, իրավունքի էության կենսագործումը նախադեպային ձևում և դատական իրավակիրառումը սերտաճած են, այսինքն՝ իրավակիրառման ընթացքում ստեղծված անհատական կանոնը ձեռք է բերում նորմատիվ նշանակություն հետագա համանման դեպքերի համար [2, էջ 87]: Բայց և այնպես, միշտ կա հնարավորություն բողոքարկել կամ վիճարկել կամայական կայացված որոշումն ավելի բարձր դատական ստյանում:

Ինչ վերաբերվում է Հայաստանի իրավական իրականությանը, ապա այստեղ դատական որոշումները չեն համարվում դասական իմաստով նախադեպեր, քանի որ դրանք ընդամենը մեկնաբանողական նախադեպեր են և չեն ստեղծում իրավունք, փոխարենը մեկնաբանում են ընդհանուր, վերացական օրենքի նորմը՝ անհատական որոշակի անձանց և դեպքերի վերաբերյալ: Ապահովում են դատարանների կողմից կայացվող վերջնական դատական ակտերի բովանդակության միասնականությունը և կանխատեսելիությունը: Հետևաբար, իրավունքի կենսագործման իրավաբանական գործընթացում այս տեսակի նախադեպը համարվում է օրենքը կոնկրետացնող և ունի ենթաօրենսդրական նշանակություն:

Հաշվի առնելով վերոգրյալը, այնուամենայնիվ պետք է նշենք, որ անկախ նրանից, թե որ իրավական համակարգերի դիրքերից և ինչ փուլերով ենք դիտարկում իրավունքի կենսագործման իրավաբանական գործընթացը՝ ավարտական փուլում իրավունքը կենսագործվում է՝ այսինքն հնարավորությունից վերածվում է իրականության, իրավունքի սուբյեկտի կամքով: Սա նշանակում է, որ իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման հաջորդ կարևոր պայմանն իրավունքի սուբյեկտի նախատրամադրվածությունն է: Իրավունքի սուբյեկտը, որն օժտված է սուբյեկտիվ իրավունքներով ու պարտականություններով, վերջին հաշվով միակն է, որ հետաքրքրված է դրանց կենսագործման մեջ: Մյուս բոլոր կողմերը, այդ թվում իրավակիրառ և իրավաստեղծագործող մարմինները հետաքրքր-

ված են և գործում են գուտ իրավունքի սուբյեկտի շահերից, սակայն երբ և ինչ ծավալով կենսագործել իրավունքը որոշում է բացառապես իրավունքի սուբյեկտը: Հետևաբար, կվերածվի արդյոք իրավունքը հնարավորությունից իրականության, նախ և առաջ, կախված է իրավունքի սուբյեկտից: Միաժամանակ, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կամ կենսագործման համար համապատասխան կառուցակարգերի ստեղծումը և իրավաբանական գործընթացների մշակումը վերապահված է իրավասու պետական մարմիններին: Վերջիններիս նշված գործունեությունը միտված է իրավունքի կենսագործումն արդյունավետ և որակյալ դարձնելու, բայց և այնպես դրա գործարկումը և օգտագործումն ամբողջովին իրականացվում է իրավունքի սուբյեկտների կողմից:

Այսպիսով, իրավունքը՝ որպես հնարավորություն վերածվում է իրավական իրականության արդյունավետ կենսագործման միջոցով և միայն համապատասխան պայմանների ապահովման պարագայում: Ամփոփելով այդ պայմանները, պետք է եզրակացնենք հետևյալը.

Նախ և առաջ, «իրավունքի կենսագործում» հասկացությունը պետք է ընկալել և հասկանալ իրավունքի լայն իմաստով՝ իրավունքի էության կամ «օբյեկտիվ» իրավունքի և դրանից տարբերվող դրական (սուբյեկտիվ) իրավունքի, ինչպես նաև սուբյեկտիվ իրավունքների և պարտականությունների կենսագործումը կամ նյութականացումը հասարակական հարաբերություններում: Ինչը հաշվի առնելով, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման առաջին և գլխավոր պայմանը իրավունքի էության կենսագործումն է իրավական երևույթներում, իսկ «իրավական իրականություն» և «իրավական հնարավորություն» կատեգորիաները բնութագրում են իրավունքի էության զարգացման դիալեկտիկան:

Իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման երկրորդ՝ ամանցյալ պայմանը համապատասխան իրավական նորմերի կամ օրենքների (որպես իրավունքի էության արտահայտության ձևի) արդյունավետ կենսագործման հիմնախնդիրն է, որը հանգում է, սակայն ամբողջովին չի լուծվում իրավաստեղծագործության ընթացքում՝ իրական, ձևական, ընդհանուր (վերացական), մասնավոր, փաստացի, անիրաժեշտ և պատահական իրավական հնարավորությունների տեսակների տեղին, ժամանակին բացահայտման և դրանց ճիշտ ընտրության միջոցով: Միաժամանակ, բացի

իրավաստեղծ գործունեությունից, իրավական հնարավորությունների բովանդակության ձևավորման և արդյունավետ կենսագործման վրա կարող են ազդել մի շարք օբյեկտիվ օրինաչափություններ և սուբյեկտիվ գործոններ (օրինակ, իրավունքի սուբյեկտների իրավագիտակցության մակարդակը, տվյալ պատմական միջավայրում առկա հանգամանքները և քաղաքական պահանջումները, ինչպես նաև սոցիալական, տնտեսական, հոգևոր, մշակութային և մի շարք այլ գործոններ), որոնք անկախ են իրավաստեղծագործողի կամքից: Բայց և այնպես, իրավունքը հնարավորությունից իրականություն վերածվում է իրավական օրենքում իրավաստեղծագործության ձևով:

Եվ վերջապես, իրավունքի հնարավորությունից իրականություն վերածման կարևոր պայման է հանդիսանում իրավունքի սուբյեկտի կամքը, քանի որ երբ և ինչ ծավալով կենսագործել իրավական օրենքը որոշում է բացառապես իրավունքի սուբյեկտը: Հետևաբար, կվերածվի արդյոք իրավունքը հնարավորությունից իրականության, ավարտական փուլում, կախված է արդեն իրավունքի սուբյեկտի կամքից:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Լեյոյան Հ. Ա.**, «Իրավական հնարավորությունների տեսակները և դրանց առանձնահատկությունները» // «Պետություն և իրավունք» Թիվ 1 (95), ԵՊՀ, Երևան, 2023: <https://doi.org/10.46991/S&L/2023.95.005>,
2. **Գավթյան Ն. Գ.**, Իրավունքի կենսագործում, – Երևան: «Հայրապետ» հրատարակչություն, 2017:
3. **Վաղարշյան Ա. Գ.**, «Իրավաբանական իրավահասկացողությունը և «իրավունքի իրականացում» հասկացության հիմնախնդիրները // Իրավագիտության հարցեր, Երևան, 2006, թիվ 2-3:
4. **Нерсесянц В. С.**, Философия прав. – Москва: издательство НОРМА, 2000.
5. Общая теория права и государства: Учебник / Под ред. **В. В. Лазарева**. – М., 2005.
6. Проблемы теории права и правореализации: Учебник / Отв. ред. **Л. Т. Бакулина**. – М.: Статут, 2017.
7. Теория государства и права. Учебник. Под ред. **В. М. Корельского** и **В. Д. Перевалова**. – М., 1997.

Տճանաչման/ձևավորման է՝ 04.04.2025

Рецензирования/Գրախոսում է՝ 11.04.2025

Принята/Ընդունվել է՝ 18.04.2025